



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ և ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԲԱՌԱՍՈՒՆԵՒՎ, ՆՅԵՐՈՐԴ

46 ՅՈՒՆԻՍ 1872



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ Ը. Յ. ՔԻՐԿՃԱՆ

— 1872 —

ԸՆԳՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՔԱՅՈՒՄ 1870 ՍՄԻՆ

ՆԻՍՏ ԽԶ.

16 ՅՈՒՆԻՍ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲՍԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԻ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ԱՂԱԲԷԿԵԱՆ Ս. ԷՖ. (Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1° Նորոգ ընտրութիւն Ազգ. Վարչութեան Քաղ. Ժողովոյ :
- 2° Ընտրութիւն նորոգ Գիււանի Ընդհ. Ժողովոյ :
- 3° Կոնդակ Վ.Ե.Ն. Կաթողիկոսի :
- 4° Ատենական Կանոնադրութիւն :
- 5° Կաթողիկոսական եւ Պատրիարքական յարաբերութիւնք :

Ատենը բացուեցաւ ժամ 6 3/4 ին ի ներկայութեան 47 երեսփոխանաց, որոց թիւը վերջապէս 65 ի յանդեցաւ :

Ատենապետ էֆ. յայտարարելով թէ մեծագոյն մաս գոյանալու համար տակաւին հինգ երեսփոխանաց ներկայութեան պէտք կայ, եւ թէ նախընթաց 7 նստերու ատենադրութիւնք դեռ եւս մամուլ տակ լինելով պատրաստ աւտենադրութիւն չկայ ժողովոյն ընդունելութեան ներկայացնելու, կը հրաւիրէ զերեսփոխանս որ մինչեւ մեծագոյն մասի գոյացում Քաղ. Ժողովոյ նորոգ կազմութեան վրայ եղած առաջարկութեան վիճարանութեամբն զբաղին. եւ յիշեցնելով թէ առաջարկութիւն ընողներն իբրեւ մասնաժողով պիտի միանային եւ համաձայնութեամբ տեղեկագիր մի բերէին այսօր, կը հրաւիրէ նոյն մասնաժողովը ներկայացնել իւր

տեղեկագիրն եթէ պատրաստ է :

ԽՈՒՅԻՆՃԵԱՆ Կ. ԷՖ. — (Անդամ Մանուշակոյ) Մեր համաձայնութեան կէտերուն վրայ համառօտ տեղեկագիր մի չլինուած է արդէն, զոր մեր կողմէ փախաղեան էֆ. պիտի ընթեանու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն խօսքը փախաղեան էֆ. ին է :

Փախաղեան Ս. էֆ. խօսք առնելով Գիււանէն իբրեւ տեղեկաբեր կը կարդայ չհետեւեալ տեղեկագիրը :

Մեծապատիւ Ատենապետ Ազգ. Ընդհ. Ժողովոյ :

Ազգային Վարչութեան Քաղ. Ժողովոյ նորոգ ընտրութեան խնդրոյն առթիւ Ազգային

Յրեսփոխանական ժողովոյ մէջ բացուած վիճաբանութեան միջոցին այլ եւ այլ առաջարկութիւններ ներկայացնող ստորագրեալ Երեսփոխանքս՝ ըստ հրահրանաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր երեք անգամ 'ի Ղալաթիա հաւաքեցանք, մեր առաջարկութիւնները միաբանեցնելու խորհրդով:

Որչափ որ վիճարանութիւնը Սահմանադրութեան 36-րդ եւ 37-րդ յօդուածոց վրայ սահմանեալ էր ըստ արդեանց քուէարկութեան վերջին ընդհ. ժողովոյ, սակայն Քաղ. ժողովոյ պաշտօնը լաւ ըմբռնելու եւ ըստ այնմ բաղձացուած համաձայնութիւնը գոյացնելու համար՝ երկարորէն խորհրդակցութեան եւ քննութեան առարկայ եղաւ Սահմանադրութեան 41-րդ յօդուածն ալ, որ է այս.

« Քաղ. ժողովոյ պաշտօնն է Ազգային քաղաքական գործոց ընդհանուր տեսչութիւնը: « Իւր պարտաւորութիւնքն են Ազգին բարեւարգութեան եւ յառաջադիմութեան մտադրութիւն եւ փոյթ ունենալ, իւր տեսչութեան տակ գտնուող Խորհրդոց կողմէն մատուցուած ազգօգուտ առաջարկութիւններն « ուշադրութեամբ քննել, եւ անոնց կարեւորութիւնը յայտնուելէն ետքը՝ հաստատել կամ « գործադրութեան արգելքները բառնալու ջանք « ընել »:

Սահմանադրութեան թէ՛ ներկայ յօդուածին եւ թէ՛ յաջորդ 42-րդ յօդուածին վրայ եղած երկար քննութիւններէն տեսնուեցաւ թէ՛

1. Քաղ. ժողով մը ոչ միայն Բ. Դրան եւ Ազգին, կեդրոնական Վարչութեան եւ Գաւառական Վարչութեանց մէջ յարաբերութեանց միջնորդ մէջ, այլ եւ ազգային բովանդակ վարչական գործոց տեսչութեան եւ անօրինութեան պաշտօնն ունի, եւ այս պաշտօնը իրմէ կարգեալ Խորհրդոց կը բաշխէ եւ անոնց վրայ կը հսկէ:

2. Քաղ. ժողով մը իր յարաբերութեանց վերաբերեալ պաշտօնին մէջ ալ, դարձեալ ընդհանուր տեսչութիւնն իրեն պահելով՝ գաւառական եւ տեղական գործոց անօրէնութեան համար, ինչպէս որ այս փորձն արդէն եղած է, յատուկ Խորհուրդներ պէտք է կարգել, որոնք կը վարեն իրենց պաշտօնը Քաղ. ժողովոյ արւած հրահանգին համաձայն:

Այս խորհրդածութիւններով Քաղ. ժողովոյ անդամոց թիւը 14 ի վերածել առաջարկել պատշաճ կը համարինք, որ կը հաւասարի Կրօնական ժողովոյ թուոյն:

Ընտրողք՝ երբ Քաղ. ժողովոյ պաշտօնը լաւ ըմբռնենք, բնականաբար նոյն պաշտօններուն համանգամայն կամ 'ի մասնաւորի հմուտ անձերու իրենց քուէն պիտի տան:

Քաղաքական ժողովոց մինչեւ ցարդ ընդհանրապէս գործածուած սովորութեան համաձայն միայն յարաբերական խնդիրներով զբաղելուն եւ տեսչական խնդիրներով զբաղելու շատ քիչ կամ բնաւ ժամանակ չունենալուն պատճառ գրեթէ միշտ մասնաւոր եւ անհատական խնդիրներն ըլլալը նկատուելէն զատ՝ նաեւ ըստ յայտարարութեան Ամեն. Ս. Պատրիարք Հօր կեդրոնական Վարչութեան հետ Կ. Պոլսոյ թաղային եւ անհատական խնդրոց անմիջական կապակցութիւն ունենալը նկատուելով, այս մասին ըստ ներելոյ Ազգ. Սահմանադրութեան դարման տանելու հոգը՝ Սրբազան Պատրիարք Հօր աջակցութեամբը նորոգ կազմելի Քաղաքական ժողովոյ վերաբերեալ ըլլալն ընդունուեցաւ:

Վերջապէս առաջարկութիւն ներկայացնող ստորագրեալ Երեսփոխանքս, Ազգին արդի վիճակն եւ դաւառաց մէջ Սահմանադրութեան նոր 'ի նորոյ գործադրուիլն ուշադրութեան առնելով, Սահմանադրութիւնը փոխանակ մէկէն 'ի մէկ յեղաշրջելու, զայն գործադրելով եւ հետեղհեալ փորձառութեամբ փոփոխելու կամ վերաքննելու սկզբունքով, 36 եւ 37-րդ յօդուածոց վերաքննութիւնն կը ներկայացնեմք Պատկառելի ժողովոյ իբրեւ առաջարկութիւն ստորագրելոցս կողմանէ, սպալս:

« Յօդ. 36. Քաղ. ժողովը կը բաղկանայ ազգային գործոց եւ Տէրութեան օրինաց տեղեակ « տամնելչորս աշխարհականներէ »:

Ընտրութեան մասին եղած տարբեր կարծիքներն սա կերպով համաձայնեցան. ըստ որում ընտրելեաց ցանկի սկզբունքն ընդունուած է Սահմանադրութեան մէջ, Քաղ. ժողովոյ ընտրութեան համար կառաջարկենք որ յատուկ Մասնաժողով մը փոխանակ եռապատիկի կրկնապատիկ ընտրելեաց ցանկ մը ներկայացնէ, ազատ թողով իւրաքանչիւր Երեսփոխան նոյն ցանկէն դուրս ուղած անձանց քուէ տալու: Դարձեալ իւրաքանչիւր Երեսփոխան ազատ մընայ իր ուղած ընտրելեաց ցանկը ներկայացնելու:

Սոյն ընտրելեաց ցանկի խնդրոյն մէջ Օգտէն էֆ. եւ Երեսփեան էֆ. համակարծիք չեղան

մեզ. առաջինը բնաւ ցանկ չընդունելով, երկրորդն ալ փակեալ ցանկ առաջարկելով:

16 Յունիս 1872

(Ստոր.) ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. Կ. Ա. ԻԹԻԻՃԵԱՆ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Տ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ

Անդամոց թիւը 10 ի իջնել կառաջարկեմ:
Թ. ՊԵՂԵԱՆ

Տեսուչ Խորհրդոց ընտրութիւնը Քաղ. ժողովէն չըլլալու պայմանաւ կընդունին:
Հ. ԻՓԵԿՃԵԱՆ

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Այս կարգացուած տեղեկագրին նայելով Մասնաժողովն երկու Խորհուրդներ յաւելցնելու առաջարկութիւն կընէ, Տեղական եւ Գաւառական. Այս Խորհուրդներուն բնաւ հարկ չկայ. որովհետեւ Տեղական Խորհուրդն ինչ պիտի գործէ. եթէ խնդիրը թաղական վէճերու վերաբերեալ է, Գաւառական Խորհուրդ կայ. եթէ հաշուական է, Տեսչական Խորհուրդ կայ. եթէ դպրոցի կամ դաստիարակութեան վերաբերեալ է, Կրթական Խորհուրդ կայ. ուրեմն յատուկ Տեղական Խորհրդոյ մը կազմութիւնն աւելորդ է: Նոյնպէս Գաւառական Խորհրդոյ կազմութեան գալով Սահմանադրութիւնը կըսէ թէ՛ Գաւառներէն եկած խնդիրներն ո՛ր Խորհրդոց որ պատկանին, անոնց պիտի յանձնուին. ուրեմն այս ալ աւելորդ է:

Տ. ՂԵՈՒՆԻ ՎՐԴ. ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ. — Քրիստոստուր էֆ. կարեւոր չտեսնէր Տեղական եւ Գաւառական Խորհրդոց գոյութիւնն, որ իրենց առաջարկութեանց վրայ իրարու համաձայնող եօթն Երեսփոխանք՝ իբրեւ կարեւոր առաջարկութիւն մը՝ իրենց միաբանական տեղեկագրի մէջ անցընելով պատկառելի ժողովոյ դերած են: Ես այժմ Քրիստոստուր էֆ. ի կարծեաց հակառակ պիտի պնդեմ թէ՛ այդ երկու Խորհրդոց հաստատութիւնն անհրաժեշտ եւ ստիպողական է: Այսու Ազգ. Վարչութիւն թէ՛ տեղական եւ թէ՛ գաւառական շատ մը մասնաւոր ու անհատական գործերէ ազատելով, ժամանակ կուտենայ իւր նստերու մէջ ազգային կենսական եւ հանրական խնդիրներով զբաղիլ: Միւս կողմէ այդ Խորհրդոց անդամներն ալ՝ հետեղհեալ ազգային գործոց մէջ ընտրելանալով՝ ապագա-

յին համար իւրեւ մը հմուտ եւ տեղեակ մարդիկ կը պատրաստուին, որոց թիւ դժբաղդաբար շատ քիչ է: Օրինակով մը կուզեմ այդ Խորհրդոց օգտակարութիւնն ապացուցանել: 1871 ին կազմուած Տեղական եւ Գաւառական Մասնաժողովները Վարչութեան զրազմունքն՝ անհատական եւ թաղական գործոց մասին ըստ բաւականի թեթեւցուցին. եւ նոյն Գաւառական Մասնաժողովոյ անդամներէն մին, շանիկեան Յովսէփ Էֆէնտի, իւր հայրենիք Ակն քաղաքը վերադառնալով այս անգամ յաջողոր է Ակնայ քաղաքին մէջ Սահմանադրութիւն գործադրել եւ օրինաւորապէս գաւառական Ընդհ. ժողով կազմելով տեղւոյն կրօն. եւ Քաղ. ժողովներն ընտրել տալ. եթէ նա հոս քիչ շատ հմտութիւն չստանար, չէր կրնար հին Սահմանադրութիւն գործադրել: Ուստի այս օգտակարութեանց համար կառաջարկեմ որ յիշեալ երկու Խորհրդոց կարեւորութիւնը պատկառելի ժողովոյ իւր որոշմամբ հաստատէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կը յայտարարեմ թէ՛ ժողովոյ օրինական թիւը լրացաւ, եւ 'ի գիտութիւն նորեկ Երեսփոխանաց պարտ կը համարիմ յայտնել որ՝ Քաղ. ժողովոյ կազմութեան համար եղած առաջարկութեանց վրայ եօթն Երեսփոխանաց կողմէ համաձայնութեան տեղեկագիր մը կը ներկայանայ եւ վիճարանութիւնն անոր վրայ է: Եօթն Երեսփոխաններէն հինգը համար կարծիք են, իսկ Պեղեան էֆ. անդամոց թիւ 10 ըլլալու պայմանաւ կընդունի, նմանապէս Իփէկճեան էֆ. տեսուչ Խորհրդոց ընտրութիւնը Քաղ. ժողովէն չըլլալու պայմանաւ կընդունի: Այսու ամենայնիւ ըսել է որ խնդիրն երկու կէտի վրայ է. մէկը Քաղ. ժողովն 14 անդամէ կազմել եւ միւսը զայն երկուքի բաժնել . . . :

Առաջարկութեանց Մասնաժողովոյ անդամներն ընդմիջելով կը ծանուցանեն թէ՛ երկուքի բաժանում չկայ: Ատենապետ էֆ. առարկելով թէ՛ ըստ որում տեղեկագիրը կանխաւ Դիւանին յանձնուած չէր որ ընթերցած լինէր եւ առաջարկութեանց իմաստն անթերի ըմբռնելու կարող եղած, կը խնդրէ Մասնաժողովէն որ լաւ մի բացատրեն շետեապէս Իութիճեան էֆ. խօսք կառնու բացատրելու համար:

ԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՅ. — (Յունիս Մասնաժողովոյ)

Քաղ. ժողովոյ անդամոց թուոյն 14 յինելն ա-
մենքս ընդունեցինք. միայն թէ Վարչութեան
տեսուչ Խորհրդոց պէս Տեղական եւ Գաւառա-
կան անուսով զատ զատ երկու Խորհուրդ ա-
ւելնալը կարեւոր տեսանք, որոց մէկը տեղա-
կան գործոց եւ միւսը գաւառներէն եկած
խնդրոց անօրէնութեամբն գրադի, եւ ասոնց
ամենուն վրայ Քաղ. ժողովն իւր ընդհանուր
տեսչութեան պաշտօնը վարէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բայց ձեր մէջ թուոյն
համար 10 ըսողներ ալ կան:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — (Աւրա՛մ Մանա՛շահայ)
Ո՛չ, ո՛չ. միայն Պէկեան էֆէնտին է զայդ ը-
սող, եւ այն ալ 14 ի համողութեամբ էր առաջ
բայց այսօր նոյն համողութեամբ փոխած ըլլալուն
համար 10 ըսաւ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Տ. Ղեւոնդ Վրդ. ի
առարկութեան չեմ ուզեր պատասխանել, վա-
սին զի ինչ որ կը փնտռէ նա՛ կայ արդէն: Մեր
ժողովներուն մէջ խտրութիւն չկայ, Քաւա-
ռացիք եւ Պոլսեցիք անխտիր կանգամակցին.
չեմ գիտեր թէ Տեղական Մասնաժողովն ինչ
պիտի գործէ Մասնաժողովեան մէջ ցոց-
ուած գործերէն դուրս: Նոյնպէս եթէ Գաւառ-
ական Մասնաժողով մ'ընտրուի, Քաղ. ժո-
ղովոյն ինչ գործ պիտի մնայ ընել:

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ. — Տ. Ղեւոնդ Վրդ. ի հա-
մաձայն Քրիստոսաւոր էֆ. ի կարծեաց հակա-
ռակ պիտի խօսիմ:

Իրաւ է որ Պոլսեցւոց եւ Գաւառացւոց մէջ
խտրութիւն չեմք դներ ազգային պաշտօննե-
րու մասին, վասն զի ամենքս համարին եմք,
սակայն գրկողութիւն մը կայ, որուն գէժ կը
բողոքեմ եւ պիտի բողոքեմ թէ իմ կողմէս եւ
թէ՛ յանուն գաւառացւոց: Պոլսի մէջ 36000
են շայերը, իսկ գաւառաց մէջ 2000000. եւ
թէ ժողովներուն ժամերը հաշուեմք, 1/2 ժամ
հազիւ կ'իյնայ Պոլսեցւոց եւ մնացածը Գաւառ-
ացւոց կը պատկանի. այսու ամենայնիւ ժողո-
վոց բոլոր ժամերը տեղացիք կը գրաւեն միշտ եւ
գաւառացւոց խնդիրներ ետ կը մնան, մաքուր
հազուամ մարդեր շուտով ժողովոց դռնէն ներս
կը մտնեն, իսկ գաւառացիք 30 աւուր ճանա-
պարհէ կողման 40 ու 50 ու ժողովոց դուռը
կուպանն. Գաւառացւոց համար ամենամեծ
զրկանք մ'է այս, որոց գէժ սաստկապէս կը
բողոքեմ: Ինչու համար գաւառացւոց խնդիր-
ներն ամբողջով անպատասխանի մնան եւ
Պոլսեցիք բռնի իրենց խնդիրներն առաջ քշեն:

Այս պատճառաւ հարկ է դաւառացի հմուտ
անձերէ զօրաւ որ Մասնաժողով մը կազմել, որոց
յատուկ պաշտօնն ըլլայ գաւառական գործերը
ընել եւ անօրինել: Անցեալ տարի այսպէս
մասնաժողով մը կար, որուն անարժանաբար
նախագահի պաշտօն վարեցի, շատ աղէկ գոր-
ծեր անօրինեց, բայց վերջապէս ցրուեցաւ, ո-
րոց պատճառը չեմ ուզեր բացատրել: Քաղ.
ժողովը չկրցաւ գաւառական խնդրոց վրայ
ըջօրէն խորհիլ, վասն զի ամուսնական, ան-
հատական եւ անեւտրական խնդիրներ՝ որք
թէ եւ Գաւառացական Խորհրդոց կը վերաբե-
րին, անկէ խոյս տալով Քաղ. ժողովոյ կը ներ-
կայանային եւ անոր ժամերը կսպառէին. վկայ
է այս ըսածիս Եւսուֆեան էֆ: Աւստի ինչ-
պէս գաւառական, նոյնպէս տեղական մաս-
նաժողով մ'ալ կազմել հարկ է, որպէս զի այդ
անհատական խնդիրները ընաւ Քաղ. ժողովէն
ներս չմտնեն, եւ Քաղ. ժողովը ժամանակ
ունենայ միայն յարաբերական եւ ընդհանրա-
կան խնդիրներով զբաղելու:

ՅՈՒԱԿԻՄԵԱՆ Յ. ԷՖ. — Կը կրկնեմ Տ. Երե-
միա Եպս. ի առաջարկութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Գիւանը դարձեալ պարտ
կը համարի յիշեցնել որ վիճաբանելի խնդիրը
նախ Քաղ. ժողովոյ անդամոց թիւն է եւ ա-
պա ընտրութեան եղանակը: Կանխաւ թիւը
որոշեմք, յետոյ զիւրին կը յինի ընտրութեան
եւ գործոց բաժանման վրայ խօսիլ:

ՊԵԿԵԱՆ Թ. ԷՖ. — Նախ եղիւ խօսքով կու-
զեմ ուղղել Օզանն էֆ. ի մէկ սխալը, որ ը-
սաւ թէ ես ՚ի սկզբան առաջարկութեանց մաս-
նաժողովոյն մէջ իբր թէ համաձայնած եմ Քաղ.
ժողովոյ թուոյն 14 ըլլալուն եւ հիմա իմ հա-
մողումս փոխած. ընդհակառակն ես միշտ իմ
կարծեացս վրայ պնդեցի մասնաժողովոյն մէջ,
ինչպէս կրնան վկայել Եւսուֆեան էֆ. եւ
այլք: Այս սխալն ուղղելէ ետեւ կը դառնամ
բուն խնդրոյն:

Քաղ. ժողովը թէ՛ ընդհանուր տեսչութեան
եւ թէ՛ յարաբերութեանց պաշտօնը միանգա-
մայն վարելով եւ յարաբերական գործերով ըզ-
բաղելով չէր կրնար ընդհանուր տեսչութիւն
ընել: Առաջարկութեանց Մասնաժողովս տես-
նելով որ այս երկու պաշտօնք իրար կը շփո-
թեն եւ իրարու գէժ արգելք կը յարուցանեն,
ուղեց զանոնք իրարմէ զատել եւ հարկ տեսաւ
որ տեսուչ Խորհրդոց վրայ ուրիշ երկու Խոր-
հուրդ եւս յաւելնան Տեղական եւ Գաւառա-

կան անունով, եւ ասոնք ալ մի եւ նոյն իրա-
ւասութեամբ տեղական եւ գաւառական գոր-
ծոց տեսչութիւնը վարեն, որով Քաղ. ժողո-
վը մասնաւոր խնդիրներով զբաղելէ զադրի:
Քրիստոսաւոր էֆ. աւելորդ կը համարի այս
երկու նոր Խորհուրդները, բայց կը սխալի.
որովհետեւ Քաղ. ժողովը քանի որ յարաբե-
րութեանց միջնորդ է, տեղական եւ գաւառ-
ական գործոց խտրուելու պարտք կը կոչայ.
Աւստի կուզեմք որ այս պարտքն իւր ձեռքէն
տանուի, երկու յատուկ Խորհուրդներու յանձ-
նելով, եւ Քաղ. ժողովն իւր հսկողութեան
պարտքը միայն կատարէ: Քաղ. ժողովը վե-
րաքննութեան ատեան եղած էր. եթէ ամուս-
նական դատի մը համար վերաքննութիւն հարկ
չինէր, Քաղ. ժողովոյ կը գիմէին եւ տարինե-
րով ժողովն անոր հետ կը բաղդէր. բայց եթէ
երկու նոր Խորհուրդներն ալ հաստատուին՝
միթէ Քաղ. ժողովն ազատ պիտի լինի այդ
վերաքննութեան հոգերէն, չեմք կրնար այժ
ըսել. անոր համար վերաքննութեան ատեան
մ'ալ պէտք է. կսպասէի որ Քրիստոսաւոր էֆ.
այս պէտքն ալ բացատրէր, կարծեմ այս չա-
փով կրցի հաստատել թէ Տեղական եւ Գաւառ-
ական Խորհուրդները պէտք են, որպէս զի
Քաղ ժողովը՝ մասնաւոր հոգերէ զերժ՝ կարե-
նայ իւր ընդհանուր հսկողութեան պաշտօնը
կատարել: Չմոռնա՛ք սա ալ ըսել թէ միւս
Խորհուրդներն որքան ալ ազատ պիտի ըլլան
իրենց գործոց մէջ, բայց ազատ չպիտի ըլլան
յարաբերական խնդրոց մէջ. Քաղ. ժողովն է
յարաբերութեան միջնորդ Բ. Գրան եւ Ազգին
մէջ. եթէ Բեհէ՛ն մի գրել հարկ ըլլայ, միւս
Խորհուրդները պիտի գիմեն Պատրիարքի միջ-
նորդութեամբ Քաղ. ժողովին:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Իրաւ է թէ Պէկեան
էֆ. 10 թիւ առաջարկեց եւ 10 ի համար ստո-
րագրեց, բայց երբ սո՛ւ մ'առաջ տեղեկագի-
րը կատարագրէինք իւրաքանչիւր ոք իւր գի-
տողութիւնն ընելով, Պէկեան էֆ. լոց եւ
չափեց իւր առաջարկութեան վրայ. եթէ պըն-
դիւր ըլլար՝ թերեւս խօսէինք, վիճէինք ու հա-
մողութիւնք մեր մէջ: Ինչ եւ է թողու՛ք այդ
եւ գառնա՛մք միւս խնդրոյն: Ամենքս ալ գի-
տեմք որ այսօրուան խնդիրը Քաղ. ժողովոյ
ընտրութիւնն է. եթէ մեք այսօր բացակայ լի-
նէինք եւ լսէինք թէ հոս խնդրոց կարգէն
դուրս Տեղական եւ Գաւառական Խորհրդոց
համար վիճարանութիւն եղեր եւ որոշում արը-

ուեր է, ինչ պիտի ըսէինք. հարկաւ մեզ
զրկանք մ'եղած պիտի համարէինք այդ բանը.
Աւստի կատարելեմ որ Գիւանը բացակայ ե-
րեսփոխանաց իրաւունքն յարգելու համար թոյլ
չտայ ժողովին խնդրոց կարգէն դուրս ուրիշ
խնդիրներ յուղելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Օզանն էֆ. իրաւունք ունի.
Գիւանը ճիշդ նորա առաջարկութեան համա-
ձայն արդէն երկու անգամ յիշեցուց որ առա-
ջարկութեանց Մասնաժողովը միաձայնութեամբ
տեղեկագիր մը բերած է, որ երկու կէտ կը
պարունակէ. նախ՝ Քաղ. ժողովոյ թիւն եւ
այս ընտրութեան եղանակը, շետեւապէս
նախ թիւը պէտք է որոշուի, եւ յետոյ ընա-
րութեան վրայ խօսուի:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Տ. Երեմիա Եպս.
կըսէ թէ Քաղ. ժողովը մասնաւոր խնդրոց հետ
պարագելով զեղծման մէջ կը գտնուի եւ թէ
գաւառացւոց մեծ զրկանք եղած է: Մեր օրէն-
քը խիստ լաւ բացատրած է. Քաղ. ժողովն իր
մէջ բաժանում եթէ հարկ է՝ կրնայ ընել, այդ
մասին Ընդհ. ժողովոյ կողմէ հրահանգ տալու
հարկ չկայ. եթէ Խորհուրդներն աւելցնեմք,
Քաղ. ժողովոյ գործ չմնար, ինչ հարկ ուրե-
մըն որ այս տեսակ խնդիրներ յուղելով լա-
բիւրինթոսի մէջ իյնամք. մեք պէտք է Քաղ.
ժողովն ընտրեմք եւ վաւերացնեմք, այն ալ
թո՛ղ իր ներքին կանոնները շինէ եւ գործէ
ըստ օրինի. իսկ թէ որ առաջարկութիւններ
ընելու հարկ տեսնէ՝ կրնայ բերել Ընդհ. ժո-
ղովին:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Պարտ կը համարիմ
գիտել տալ թէ առաջարկութեանց Մասնաժո-
ղովն իր չըջանէն դուրս ելած չէ. իւր տեղե-
կագրին մէջ երկու կէտ կայ, մէկը Քաղ. ժո-
ղովոյ ընտրութեան վրայ առաջարկութիւնն է,
իսկ միւսը կարծիք մ'է՛ որով կուզէ յայտնել
թէ Քաղ. ժողովն ինչպէս կրնայ իւր պաշտօ-
նը կատարել առանց ձեռքը կսպառելու տեղա-
կան եւ անհատական խնդիրներով: Մասնաժո-
ղովն իւր նախարանին մէջ սա պարագան բա-
ցատրած է, Քաղ. ժողովն ազատելու համար
այն կաշկանդումներէն՝ որուն մէջ ինկած էր
մինչեւ հիմա, եւ փորձառութեան վրայ հիմ-
նելով կատարելէ Տեղական եւ Գաւառական
Մասնաժողովները միւս Խորհրդոց կարգն ան-
ցընել, իսկ Քաղ. ժողովոյ ընտրութեան խըն-
դիրն երկու յողուածով ներկայացեալ է, որոց
հետ չեն կրնար անմիջական կապակցութիւն

ունենալ Տեղական եւ Գաւառական Խորհրդոց կազմութեան խնդիրները : Գալով ինչ ուղուած վկայութեան՝ Պէկեան եւ Օդսէն էֆէնտիններու մէջ ծագած անհամաձայնութեան մասին, ըստ այդ է որ Պէկեան էֆ. 10 թիւն առաջարկեց, բայց ըստ թէ իմ բացակայութեանս արդէն 14 եղած է, եւ թուոյն վրայ խնդիր չեմ յարուցաներ եւ կը համաձայնիմ. ահա այս է իմ գիտցածս Գաւառայով Օդսէն էֆ. ի որ ըստ թէ պէտք չէ գործոց բաժանման վրայ խօսիլ, կը հարցնեմ թէ ինչ պիտի ըլլայ մեր այս վիճարանութեան արդիւնքն : — ոչ ուրիշ բան, այլ թէ ամեն մարդ պիտի խնայոյ որ այսուհետեւ Քաղ. Ժողովը տեղական եւ անհամառոտ գործերով չպիտի զբաղի, նոյն խնդրանքներէն եկած խնդրոց մէջ ալ կան անհամառոտ վերաբերեալ խնդիրներ, կան ալ որ առաջնորդներէն ինչ վաւերացեալ չեն : մինչեւ անգամ մասնաւորաց կողմէ՝ հետադրեր կուզան, որոց վրայ մինչեւ որ իրենց տեղէն ստոյգ տեղեկութիւնք չառնուին կարելի չէ օրինաւ որ անօրէնութիւն մ'ընել : Ահա այս եւ ուրիշ պատճառներով է որ Մասնաժողովը չիշեալ երկու նոր Խորհրդոց կազմութեան պէտքը կզգայնէ : ուստի լուսադոյն կը լինի ազատ թողուլ ընտրելի Քաղ. Ժողովն այս երկու նոր Խորհուրդները կազմելու :

ՏՕԲԹ. ՌԱՅԱՅԷԼԵԱՆ ԷՖ.— Ժողովն Երկու ամսէ ի վեր թուոյ խնդրոյն վրայ կը միճարանի. կը յուսայի որ Պէկեան էֆ. որ ի սկզբան 20 ի շերտ պաշտպան էր, կը զիջանի 14 ի եւ կը վերջանայ. բայց հիմա 10 կառավարիչ. ուստի ամենէն առաջ թիւը՝ որ անհամաձայնութեան նիւթ եղած է՝ պէտք է քուէի զըրուի եւ վերջանայ :

ԻՓԷԱՅԵԱՆ Է. ԷՖ.— Պէկեան էֆ. ի գիտողութեան պատասխանելով կը յայտնեմ թէ՝ Մասնաժողովոյ տեղեկագրին մէջ Տեղական եւ Գաւառական Խորհրդոց Բ. Գրան հետ յարաբերութեան մասնելու արտօնութիւն տալ առաջարկուած չէ : կարծեմ այս կէտը լաւ կը յիշեն տեղեկագիրն ստորագրողները :

Տ. ԵՐԵՄԻԱ ԵՊՍ.— Չեմ ուզեր պատասխանել Քրիստոսաւոր էֆ. ի առարկութեանց, զի արդէն Տ. Ղեւոնդ Արք. Պէկեան եւ Երուսաղիմէն էֆէնալք անոր զէմ պատասխանեցին : ուստի կառավարիչ միայն որ Մասնաժողովոյ տեղեկագրին համեմատ Քաղ. Ժողովոյ թիւը քուէի գրուի օրոշուի, եւ վերջն ալ

ընտրութեան եղանակը : ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Երուսաղիմէն էֆ. որ առաջ ասէ պէտք չէ յիշել զՔաղ. Ժողովը բաւր, բայց չեմ գիտեր թէ իւր յառաջ բերած փորձառութիւնն ինչ օգուտներ յուցած է, սե յայտնի է որ իրենց օրով Քաղ. Ժողովը պէտք եղած Խորհուրդները չկազմեց, անոնց վերաբարեբեալ գործերն անոնց չյանձնեց եւ այս կերպով իւր վրայ շատ բեռ առաւ : եթէ Ա. անօրէնց, Երուսաղիմ եւ Կառնայ Խորհուրդները կազմէր, իւր գործը շատ կը թեթեւար : Իսկ թէ նախօրդ Քաղ. Ժողովն աղէկ թէ գէշ գործեց, այդ ալ վերջէն պիտի հասկցուի, երբ անոր գործողութեանց տեղեկագիրն ընդհ. Ժողովոյ քննութեան ներկայանայ :

ԵՐՈՍՈՒՑԵԱՆ Տ. ԷՖ.— Քրիստոսաւոր էֆ. ի զէմ կը բողոքեմ, վասն զի ինչպէն զուրս կելնէ եւ պատասխան կուզէ սալ օյնպիսի կարծեցեալ խօսքերու : զէմ, զորս ես չեմ ըրած : Եթէ նախօրդ Քաղ. Ժողովն ամբաստանել է իւր մտքն, այդ ուրիշ խնդիր է, կրնայ պարզապէս իւր ամբաստանութիւնն յառաջ բերել :

ՏՕՔԹ. ՌԱՅԱՅԷԼԵԱՆ ԷՖ.— Գարձեալ խնդիրն իւր շրջանէն ելաւ, մեր գործը Քաղ. Ժողովոյ անդամաց թիւն որոշել է, տասն պիտի ըլլայ թէ ամսնեւ չորս, ինչպէս առաջարկութեանց Մասնաժողովոյ տեղեկագիրը կը ներկայացնէ :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Ճշմարտութիւն մը մնաց որ չյայտնուեցաւ, պէտք է զայն բացատրեմ : Ես, Երուսաղիմէն, Իփէկճեան եւ Պէկեան էֆէնտիններն այն պայմանաւ համաձայնած էինք որ այսօր նորէն խնդրոյ տակ չձգուի եւ վիճարանութիւն չբացուի, թէ որ ասոնց եւ ոչ մին կուզէ զոնորութիւն ընել, ես ալ չեմ ընել :

ՕՏԵԱՆ Ք. ԷՖ.— Շնորհակալ եմ Օդսէն էֆէնտինէն, որ երբ վիճարանութիւնն իւր սահմանէն դուրս ելած եւ մոլորած էր, բուն խնդրոյն վրայ բերաւ ամփոփեց : Ինչ համար բուն խնդիրն, որով այս աստեանն զբաղած էր հինգ վեց նասերէ ի վեր, Քաղ. Ժողովոյ ընտրութեան եղանակն է, եթէ այդ խնդիրը թեթեւ կերելի օմանց, ինչ համար շատ ծանրութիւն ունի : Զանազան առաջարկութիւն ընողներ կային, ընդհ. Ժողովն հրաւիրեց զիրենք որ ժողով կազմեն եւ նախ իրենք իրենց մէջ համաձայնելու աշխատելով առաջարկութիւններն եթէ կարելի է գոնէ երկուքի վերածեն : Ահա համաձայներ են եւ ասոր համար շնորհակալ

եմ. բայց շնորհակալ չեմ իրենց յուցած եղանակէն, որովհետեւ խնդիրը պարզ թուանշանի խնդրոյ վերածեր են, Քաղ. Ժողովոյ անդամաց թիւը 20 էն 14 ի իջուցեր են, եւ եթէ լաւ հասկցայ, այս թուանշանի փոփոխութեանէն դատուիրիչ փոփոխութիւն մը չեն ըրած Սահմանադրութեան այս մասին տրամադրութեանց մէջ : Ես Սահմանադրութեան փոփոխութիւնն ուղղութեան չեմ մինչեւ վերաքննութեան փորձանակ, եւ թէ որ արդէն ինչ ինչ փոփոխութեանց երթարկուած չըլլար, ես փոփոխութիւն չէի առաջարկել : սակայն թէ որ Սահմանադրութեան մէջ անգործագրելի բան մը կայ, թէ որ շփոթութեան եւ յուզման տեղի առող բան մը կայ, Ազգ. Արչութեան կազմութեան եղանակն է այն :

Աուղեմ այս խնդրոյն վրայ խօսիլ, եթէ Ժողովը հաճի յօժարամիտ ունկնդրութիւն ընել ինձ, որով միայն պիտի քաջալերուիմ առանց հիւանդ միճակիս միտ դնելու՝ յառաջ վարել իմ պարտքս եւ հիւանդ ըլլալուս համար նըստած խօսելուս ալ ներողութիւն կը խնդրեմ Ժողովէդ, զարմանալով միանգամայն թէ ինչպէս Պատեալեա էֆէնտինն զլտողութիւն չըրաւ : յուսամ թէ միւսանդամ ալ նոյն թողտուութիւնը կընէ մինչեւ որ փոքրիկ բեմ մը հաստատուի, ուրիշ միայն պիտի կրնամք Ժողովի մը վայելուչ կերպով խօսիլ :

Պիտի աշխատիմ բացատրել խնդիրն եւ գործնական լուծում մը գտնել, որպէս զի այն խոչընդոտներն որ երբեմն պատահեցան Արչութեան քայլից առջեւ՝ նորէն չպատահին : Այս խնդիրը չլուծուի մինչեւ որ չհասկնամք թէ ինչ է Քաղ. Ժողովոյ պաշտօնն : Այս մասին թիւր կարծիքներ ունեցողներ կան. անոնց որ կըսեն թէ Քաղ. Ժողովն Ազգին գործադիր իշխանութիւնը չէ, կըսեմ ուրեմն Քաղաքական Ժողովը ոչինչ է. երբ ես ոչինչ է կըսեմ՝ ձեր ամենուր խղճմանքը կը բողոքէ, զիտեմ, ու կազաղակէ թէ ընդհակառակն ամենայն ինչ է : Եւ արդարեւ, Քաղ. Ժողովէն վեր Ս. Պատրիարքը կայ եւ անկէ վար Խորհուրդները. ըստ Սահմանադրութեան Պատրիարքը բան մը չկըրնար ընել առանց Քաղ. Ժողովին որոյ նախագահն է միայն, եւ եթէ արտաքոյ կարգի ստիպողական պարագայի մէջ, այնպիսի պարագայի մէջ ուր գործելու համար վաղուան չկրնար սպասել, իրաւունք ունի գործելու իր պատասխանատուութեանը ներքեւ, այն եւս հե-

տեւեալ նախն Քաղ. Ժողովն վաւերացմանը ներկայացնելու պայմանով է : Խորհուրդները՝ Սահմանադրութիւնը բացայայտ կերպով կը արբանադրէ որ՝ անոնք պիտի խորհին այլ գործադրութիւնը գարձեալ Քաղ. Ժողովին է : Այլ թէ գործադրին խնդիրն, իրենք չեն պատասխանատու ընդհ. Ժողովոյ առջեւ՝ այլ Քաղ. Ժողովը, գործադիր իշխանութեան համար մի միայն պատասխանատու Քաղ. Ժողովն է : Ինչպէս կը համարձակին ըսելու թէ Քաղ. Ժողովը գործադիր իշխանութիւնը չներկայացնէր : Եթէ ըսեն թէ՝ Սահմանադրութիւնն ուրիշ տեղ մ'ալ արամագրած է որ Ս. Պատրիարքն Ազգին գործադիր իշխանութիւնը կը վարէ, այդ խորհական ձեւ մ'է : մի՞ զարմանաք այսպէս ըսելուս, Բ. Գուսը զժկամակութիւն ունէր Պատրիարքէն դատուիրիչ մէկը գործադիր իշխանութիւն ճանչելու, ինչպէս ուրիշ մէկ քանի կէտերու մէջ ալ, ուստի այսպիսի գործուածքներու գիմած են Սահմանադրութեան խնդիրները. գործինակ Պատրիարքներուն էջմիածնաց Եպս. գանուելու պայմանին համար, ուր Վճիռն բաւր չէ գործածուած բայց ամենքը զիտեն թէ այդ պայմանը կայ Սահմանադրութեան մէջ :

Հիմա կը մնայ քննել թէ Քաղ. Ժողովն իբրև գործադիր իշխանութիւն ինչպէս պէտք է ընտրել, Սահմանադրական ազգաց մէջ մէկ ընդհանուր դրութիւն մը կայ, այն է՝ կընէ Երուսաղիմէն, Երուսաղիմէն, Երուսաղիմէն : Անոնց մէջ ալ երեսփոխանական Ժողով մը կայ զոր Ազգը կընտրէ եւ որ զԱզգը կը ներկայացնէ : Երեսփոխանական Ժողովոյն պաշտօնն է՝ օրէնք չինել եւ համար առնուլ Արչութեանէն, Իսկ Արչութեան պաշտօնն է՝ ամեն ինչ կարգադրել եւ գործադրել : Արիչ Ժողովներ կամ Խորհուրդներ ալ կան պաշտօնէին երթարկեալ եւ ամենուն վերելը Պատեալեան Խորհուրդը կայ, ասոնք միայն ծրարիր կը շինեն եւ կարծիք կուտան, կարծիք զոր պաշտօնեայն ուղէ կընդունի ուղէ չընդունիր : Երբ մէջ Քաղ. Ժողովն Ազգ. Արչութիւնը ներկայացնելով եւ երեսփոխանութիւնն ալ այս մեր Ժողովն ըլլալով, ինչ պէտք է որ ընեմք եւ բարոյի մէջ երեսփոխանութիւնն ինք չընտրէր գործադիր ծարմիրը, այլ մեհապետը կամ նախագահն ու որ է՝ այն կընտրէ : Իսկ երեսփոխանութիւնն անուղղակի կերպով ազդեցութիւն ունի այս ընտրութեան մէջ, երբ կը

տեսնել որ գործադիր պաշտօնականներն իրեն համակարծիք չեն, զժողովուրդին քուէով կը տասպալէ զանոնք. այն ատեն Քաղաքը կամ Հասարակապետութեան Նախագահը կը պարտաւորի երեսփոխանութեան մեծագոյն մասին կամայք համեմատ պաշտօնէութիւն մը կազմելը Վեց առաջարկուած եզանակն ուղղակի երեսփոխանութեան կը թողու Քաղ. ժողովոյն ընտրութիւնը. այս ճիշդ նախնի ձեւն է. թիւը կուզէ 20 ըլլայ, կուզէ 14, այդ վարքիկ եւ աննշան պարագայ մ'է, եւ ինձ համար այդ երկու թիւերն ալ անտեղի են, աւելի բանաւոր թիւ մը գտնել կարելի էր. բայց նորէն կրտսեմ ինձ համար շատ կարեւորութիւն չունի այդ, այդ խնդրոյն մէջ չեմ ուզեր մտնել. ինձ համար ընտրութեան եզանակն է քուն եւ կարեւոր խնդիրը: Մասնաժողովը զայն երեսփոխանութեան ձգեր է, միայն թէ ընտրողական յանձնաժողով մը առաջարկեր է որ ընտրելիաց բայց ցանկ մը տայ: Ընտրելիաց ցանկ տարու իրաւունքն ուսկից կ'անուտ այդ անգոյ մասնաժողովն. այս իրաւունքը կամ Ս. Պատրիարքինն է, կամ գոյ եղած բանի մը եւ կամ ոչ մէկունն է: Հիմա դուք կուզէք որ Ս. Պատրիարքն անտարբեր կենայ Քաղ. ժողովոյ ընտրութեան վրայ. կուզէք որ ընտրուին այնպիսի մարդիկ որոց վրայ Ս. Պատրիարքը վստահութիւն չունի. ինչպէս կարելի է ըմբռնել թէ Ս. Պատրիարքը կրնայ այնպիսի մարդոց հետ ընթանալ, մանաւանդ երբ, ինչպէս քիչ մ'առաջ ըսի, Պատրիարքին վրայ նիւթական պատասխանատուութիւն չկայ, այլ բարոյական պատասխանատուութիւն միայն կայ, որ ծանր է քան զնիւթականն. երբ զժողովութիւնը կըսկըսի, որ բարոյական պատասխանատուութեան հետեւ անքն է, բարոյական կը մեռնի. ինչպէս կուզէք որ գլուխն անտարբեր կենայ Համամտութեան խնդիրն ուրիշ անգամ ալ յուզուած է, դիտեմ որ այս ալ անկարելի է. բայց գտնել միեւնոյն սկզբանց ծառային Քաղ. ժողովոյ անդամներն. իրաց անջով կարծեաց եւ սկզբանց միութիւնն, այնպիսի խնդիրներ կան որ վերեւը կը մտնեն. երբ վարչութիւն մ'իր մէջ կը կրէ գծուութեան սերմը, կը սկստանայ եւ իր ոյժը կը ջլատի. անկարող վարչութիւն մ'աւելի կիցնայ հասարակաց կարծեաց առջեւ քան զորտ որ վարչութիւն մը այս քսածս ընդհանուր փորձով հաստատուած քան մ'է: Հիմա եւ այս ամեն անտեղութեանց

առաջն աւելու համար՝ շատ մտածելու ետեւ թէ եւ ուրիշ յատուկ եզանակ մը չգտայ, բայց Սահմանադրութեան վերաբնեւեղ ծրագիրը ձեռքրս առի եւ անայ որ ան ամեն բան կը հաշտեցնէ, թէ Ս. Պատրիարքին իրաւունքը, թէ Ընդ. ժողովոյ ընտրութեան իրաւունքն եւ թէ՛ գործողութեանց ներդաշնակութիւնը միանգամայն կը յարգէ: Թէ եւ վերաքննեալ ծրագիրն ամենեւց ալ կարգացած էք, բայց զարձեալ ձեր յիշողութիւնը զարթուցանելու համար աւաստիկ կը կարգամ այն յօդուածներն որ Քաղ. ժողովոյ ընտրութեան կը վերաբերին:

« Յօդ. 22. — Քաղ. ժողովը պաշտօն ունի « Ազգին քաղաքական գործերը հոգալու, որք « են անոր գատարակութիւնը, անտեսու- « թիւնը, համարակալութիւնն ու յարաբերու- « թիւնը: Այս ժողովը 12 քաղաքագէտ աշ- « խարհականներէ կը բաղկանայ, եւ իր պաշ- « տօնին տարբեր ճիւղերուն համեմատ՝ չորս « տարբեր մասերու կամ յատուկ մասնախում- « բերու կը բաժնուի. իւրաքանչիւրը բաղկաց- « ւեալ 3 ձեռնհաս անդամներէ, որոցմէ մէկը « մասնապետ է պատասխանատու եւ միւս եր- « կուքն անոր խորհրդակից օգնականները »:

« Յօդ. 27. — Յարաբերութեանց մասնապե- « տը միանգամայն Քաղ. ժողովին առնուպե- « տին է. . . որն ընտրութեանը համար Պատ- « րիարքը՝ Ընդ. ժողովոյ Վիսանին հետ խոր- « հրդակցելով, սոյն պաշտօնին ձեռնհաս եւ « յանձնառու անձանց ետանուն ցանկ մը կը « ներկայացնէ, որոց մէջէն քուէարկութեամբ « կընտրէ Ընդ. ժողովը զԱտենապետն »:

« Յօդ. 28. — Մասնապետաց ընտրութեանը « համար Պատրիարքն ու նորընտիր Արեւ- « տայի « Ընդ. ժողովոյ Վիսանին հետ խորհրդակցե- « լով, երեք մասնախումբերուն համար ձեռն- « հաս ու յանձնառու անձանց երեք ցանկ կը « պատրաստեն, երեքն ալ ետանուն, եւ Ընդ. « ժողովն երեք գատ քուէարկութեամբ կընտրէ « ամեն մէկ ցանկէ իւրաքանչիւր մասնապետն « իր մակարդով »:

« Յօդ. 29. — Խորհրդակից օգնականաց ընտ- « րութեանը համար չորս մասնապետները Պատ- « րիարքին հետ խորհրդակցելով, մէյմէկ քա- « րանուն ցանկ կը պատրաստեն իւրաքանչիւ- « րին իր մասին համար, եւ Ընդ. ժողովն « ընտրութեամբ կ'անուտ ամեն մէկ ցանկէն եր- « կու անուն, եւ անով թէ Քաղ. ժողովոյ « քաղիացու մը եւ թէ անոր մասնախումբերու « բաժանուած միանգամայն կը լրացնէ »:

Անա, ինչպէս կը տեսնէք՝ ծրագիրը չորս մասնախումբերու կը բաժնէ Քաղ. ժողովն, ազգային գործոց չորս տեսակ տարբեր ճիւղե- թու համեմատ, եւ անոնց իւրաքանչիւրին մէն մը ատենապետ կը սահմանէ, յարաբերութեանց մասնախումբին ատենապետը Քաղ. ժողովոյ ընդհանուր ատենապետ դնելով, Այս ատենա- պետին համար Պատրիարքն ընտրելիաց ցանկ մը կուտայ, իւրին ալ մասնախումբերու ատե- նապետները մէկ մէկ ցանկ կը շինեն իրենց ան- գամակցաց համար. Ընձ համար այս եզանա- կէն՝ աւելի բանաւոր եզանակ մը չկրնար ըլլալ. թէ՛ Վարչութեան անցեալ գծուարութիւնքն եւ թէ՛ ապագայն նկատելով կրտսեմ զայս. ես ալ ժամանակ մը գտնուեցայ Վարչութեան մէջ, թէ եւ անկանոն վարչութեան մը մէջ, ուր ինձ ալ անհամաձայն անձինք ընկերակցած էին. ես դիտեմ թէ ինչ տատապանք կրեցի մինչեւ որ ինձ համաձայն մարդիկ կրցի ընտրել: Մտածեցէ՛ք, մի եւ նոյն բանը՝ մի եւ նոյն վը- տանգը կը պատահի նաեւ Պատրիարքին:

Ես իմ կարծիքներս բացատրելով եւ ցաւելով որ չկրցի աւելի աղէկ խօսիլ, կաղաչեմ վերջա- պէս որ վերողբեալ յօդուածները նկատողու- թեան անուք եւ Քաղ. ժողովոյ ընտրութեան համար մի միայն ծրագիրն ցուցած եզանակն ընդունիք, որ ամենէն աւելի բանաւոր եւ գործնական է:

ՊԵՆԱՆ Թ. ԷԹ.— Օտեան էֆ. խիստ լաւ բացատրեց Քաղ. ժողովոյ պաշտօնն. ես ալ կրտսեմ՝ գործադիր իշխանութիւն ունի, եւ նը- կատելով հանդերձ՝ այս գրութիւնն առաջար- կեցի, որ պիտի պաշտպանեմ, ինչո՞ւ. վասն զի Օտեան էֆ. Երեսփոխի վարչական գրու- թիւնը մեզ օրինակ կը բերէ եւ մերն ալ անոր համաձայնեցնել կուզէ, շատ մարդով խորհիլ եւ քիչով գործել. կրտսեմ բայց այս գրութիւնն ան- կախ ազգաց համար լաւ է, եւ չէ թէ մեզ պէս հպատակ ազգի մը համար. ըսի ուրիշ անգամ, զարձեալ կրտսեմ որ պէտք չէ մեր վիճակն ու- րիշներուն հետ բաղդատեմք, մեր վիճակը բա- ցատիկ է, մեք հպատակ ազգ մ'եմք, պէտք է որ մեր վարչութիւնն ալ բացատրի լինի. Ուս- տի շատ մարդով խորհելու եւ քիչով գործելու գրութիւնը՝ մեր ազգին շնաստակար լինելուն համար կը ժխտեմ բոլոր ուժովս: Օտեան էֆ. ըսաւ թէ՛ Քաղ. ժողովն ամենայն ինչ է, ուրով հակասութեան մէջ ինկաւ: Այո, ես ալ

պիտի լսեմ թէ՛ Պատրիարք եւ Քաղ. ժողով ամենայն ինչ են, նոյն իսկ Երեսփոխանական ժողովն ալ մեծ են Բ. Կրան առջեւ. մեր Երեսփոխանական ժողովն ստաւել անուանա- կան է քան թէ իրական. ներեցէ՛ք որ ասի ի- բրը ճշմարտութիւն լսեմ: Քանի որ Պատրիար- քն ամենայն ինչ է Բ. Կրան առջեւ, Քաղ. ժողովը +Երեսփոխի մ'է որ կը հսկէ Պատրիարքին վրայ, որպէս զի ուղածին պէս չառնէ չձախէ. Սահմանադրութեանն առաջ Կրան. եւ Քաղ. ժողովներ հաստատուած էին Պատրիարքին քով. Ազգը կընտրէր զանոնք, որպէս զի հսկողու- թիւն ընեն Պատրիարքին վրայ. ըսել է գոր- ծադիր իշխանութեան մէջ այս երկու մարմին- ները Պատրիարքին հետ հակասական գիրք մ'ունէին. այո՛, հակասական է այս գիրքը, բայց մեր ազգին բերմունքէն ծնած է. թէ որ թողու՞ք Պատրիարքին, նա իր ուղածին պէս կ'առնէ կը ծախէ: Օտեան էֆ. ծրագրին եզա- նակն առաջարկեց Քաղ. ժողովոյ ընտրութեան համար եւ ուղեց ընտրութիւնը Պատրիարքին թողուլ. ըստ որում ծրագրին եզանակաւն ե- րեք անուն պիտի բերէ Պատրիարքն, որոց մէ- կրն ատենապետ պիտի լինի, ի հարկէ իրեն ձայնակից պիտի լինին, որով ընտրուած Քաղ. ժողովը Պատրիարքի ազգեցողութեան ներքեւ պիտի գործէ. ո՞ր կը մնայ այն ատեն մեր +Եր- Երեսփոխի Քաղ. ժողովն ամենայն ինչ էր Բ. Կրան առջեւ, արդ՝ Պատրիարք միայն պիտի լինի ա- մենայն ինչ. անոր համար կը ժխտեմ այս ա- ռաջարկութիւնը: Օտեան էֆ. ըսաւ թէ՛ Երես- փոխանական ժողովն անվստահութեան քուէով կրնայ տասպալել Քաղ. ժողովն. ո՞րչափ գծուա- րին է այս, չըսեմ անկարելի. ի՞նչ կարծէ ան- վստահութեան քուէն՝ երբ ամեն բան լրմնաց ի շեաս ազգին. մեք պարտաւոր եմք կարելի եզածին չափ ամեն շնաստակար ենթադրու- թեանց առաջն առնուլ. ուրիշ ազգաց մէջ գործադիր պաշտօնէութիւն կայ, այո՛, եւ մասնաւոր անձինք կը վարեն այդ պաշտօնը. սակայն ուրիշ կէտ մ'ալ կայ, ինչո՞ւ ձա՞ծկեմք. անոնց մէջ պատիժ եւ վարձատրութիւն կայ. երբ շնաստակար գործ մ'ընեն՝ աքտոր, բան- տարկութիւն եւ մինչեւ շղթայակապ դատա- պարտութիւն կը կրեն. մեր մէջ ի՞նչ կայ ձը- րի աշխատութեան զատ. միայն անվստահու- թեան քուէ եւ յանցաւորին համար պաշտօնէ անկում. որո՞ւ փոյթը:

Օտեան էֆ. կէտի մը մէջ ալ սխալեցաւ.



ըսաւ թէ Քաղ. ժողովը գործադիր է. ապի սը-
խալ է, ընդհակառակն Պատրիարքն է գործա-
դիր Կրօն. եւ Քաղ. ժողովոց որոշմանցը. ա-
նոր համար գրուած է Սահմանադրութեան մէջ
թէ՛ Պատրիարքն Ազգին գործադիր իշխանու-
թիւնը կը վարէ. եւ որովհետեւ Օտեան էֆ.՝
ուզեց պահ մ'ամենայն ինչ ընել Պատրիարքն,
անոր համար կըսեմ թէ Պատրիարքին եւ Վարչ-
ութեան մէջ կատարեալ համաձայնութիւն
չկրնար լինիլ. Պատրիարքը պարտաւոր է ինչ-
պէս Կրօն. ժողովին, նոյնպէս Քաղաքականին
որոշումները գործադրել, թէ՛ աղէկ եւ թէ՛
գէշ. եթէ գէշ բան մը տեսնէ՛ կը բողոքէ Ընդհ.
ժողովին. այս է իր ընելիքը:

Օտեան էֆ. աղէկ բան մ'ըսաւ թէ՛ մեք
Քաղ. ժողով մ'ընտրեմք որ վանողական դո-
րութիւնն իր մէջ ունենայ. ես ալ համամտու-
թիւն կընդունիմ, բայց ընտրութեան եղանա-
կին վրայ շուտեալ եմ. ոմանք ծիծաղեցան
եւ ըսին, ինչպէս կուզես. ըսի թէ ուրիշ մի-
ջոց չկայ՝ բայց միայն երեսփոխանք իրենց մէջ
միանան, այնպիսի անձինք ընտրեն, որ քիչ
շատ համակարծիք լինին միմեանց. Արդ վեր-
ջացնելով նորէն կառավարեմ որ Քաղ. ժո-
ղովոյ ընտրութիւնն Ընդհ. ժողովոյ մէջ կա-
տարուի, չէ թէ պաշտօնէութեան գրութեամբ՝
այլ իրրեւ ժողով ընտրուի. պաշտօնէութիւնը
մեր Ազգին համար չէ. եւ թիւն որչափ կա-
րելի է քիչ լինի, զի դժուար է 14, 15 հոգի
ընտրել, բայց 10 դիւրին է: Վենդանի օրինա-
կով մը ըսել մոռցայ, հիմա կըսեմ. վերջին ա-
տեններս բան մ'եղած է Քաղ. ժողովին մէջ,
բայց ո՛վ ըրած ըլլալը յայտնի չէ. ներքին պաշ-
տօնեայ մը ըսած է զայդ, ո՛վ ըրած ըլլալը
հարցուցինք, բայց չյայտնեցին:

Քանի որ մեր Ազգին վիճակը քննադատա-
կան է, մեր վիճակին համաձայն ժողով մը
պէտք է կազմեմք. պաշտօնէութիւնը մեզ հա-
մար չէ ըսի, եւ ինչու յանձնեմք վարչութիւնը
մասնաւորաց ձեռք. Պատրիարքը պարտաւոր է
ժողովին որոշումը գործադրել. ինչ որ ալ վի-
նի կրնայ իւր վրայէն նետել պատասխանա-
տուութիւնը Սահմանադրութեան կաթնելով,
որովհետեւ ինք մեքենայաբար կը գործէ՝ Վար-
չութեան որոշմանց գործադիրն ըլլալով. Իսկ
թէ որ Եւրոպայի ազգաց համեմատ կուզեն
կազմել Քաղ. ժողովը, պէտք է մեր վիճակն
անոնց յարմարցնեմք, որ կարելի բան չէ:

Այս միջոցին քառորդ մը դազար կանոն-
ժողովն, եւ ժամ 8 3/4 ին նորէն ատենադ կը
բացուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Կը յայտնեմ ժողովոյ որ
ինն երեսփոխանաց կողմէ ստորագրեալ հար-
ցում մը մատուցուած է Դիւանին. ատենադ բաց-
ուած ժամանակ մեծագոյն մաս չըլլալուն հա-
մար չներկայացուցի ժողովոյն, հիմա մեծա-
գոյն մաս ունիմք, կը կարգամ նոյն թուղթը.
յետոյ ժողովոյն կը մնայ որոշել թէ՛ նոյն հարց-
ման պատասխանն այսօր կուղէ լսել թէ՛ ու-
րիշ անգամ: Ահաւասիկ:

Մեծապատիւ Ատենապետ Ազգ. Ընդհ. ժո-
ղովոյ.

Ս. Երուսաղէմայ վէճի տակ եղած մեր Ազ-
գին սեպհական սուրբ տեղեաց մէջ Լատինաց-
ւոց պատարագելու խնդրոյն վրայօք ասկէց ա-
ռաջ լսուած էր թէ Պատրիարքարանէն հեռա-
գիր քաշուեր է առ Ամեն. Սրբադան Պատ-
րիարքն Ս. Երուսաղէմայ, որպէս զի Լատի-
նացւոց թողտուութիւն լինի պատարագելու:

Այս լուրն ստոյգ է, եւ եթէ ստոյգ է ինչ
պատճառաւ եւ որո՞յ տնօրէնութեամբ ՚ի գործ
գրուած է, կը հարցնեմք հրաժարեալ Քաղ.
ժողովոյ Դիւանին, եւ դո՞հարցուցիչ պատաս-
խանը ստիպողաբար կը խնդրեմք:

- 16 Յունիս 1872
- | | |
|----------------------|-------------------|
| (Սրբ.) Ք. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ | Խ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ |
| Մ. ՍԻՈՍ ՍԱՀԱԿԵԱՆ | Պ. ԺԱՄԿՈՉԵԱՆ |
| Յ. ԿՐՃԻԿԵԱՆ | Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ |
| Յ. ԵՄԵՆԻՃԵԱՆ | Ս. Մ. ԹԻԻՅՍԻԻՉԵԱՆ |
| Ա. ԽՕՐԱՍԱՆՃԵԱՆ | |

ՏՕՔԹ. ՌԱՅԱՅԷԼԵԱՆ ԷՖ.— Այդ հարցումը
հրաժարեալ Քաղ. ժողովոյն ուղղեալ է, բայց
հիմա ո՛չ անոր անդամներն եւ ո՛չ Դիւանը
հոս են. ուստի խնդրոց կարգը պէտք է անցնի
եւ ուրիշ անգամու մնայ:

Ուրիշ երեսփոխանք ալ ձայնակցեցան այս
առաջարկութեան, եւ հարցումը խնդրոց կար-
գըն անցնել որոշուեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ուրեմն կանցնիմք խնդրոց
կարգին. դադար տրուելէ առաջ խօսքը Քաղ-
ժողովոյ թուոյն եւ ընտրութեան եղանակին

նկատմամբ Մասնաժողովոյ բերած առաջարկու-
թեանց վրայ էր. տակաւին քանի մի երեսփո-
խաններ ալ խօսք ուղած էին, պէտք է որ ա-
նոնք ալ խօսին:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— Խօսքս Օտեան էֆի
դէժ էր, դժբաղդաբար հոս չէ, բայց հոգ չէ,
արձանագրութիւն կայ: Անցեալ նստին խօսք
ուզեց, չարուեցաւ նորէն վիճարանութիւն
չբանալու համար, բայց այսօր խօսեցաւ. գո՛-
եմք որ իր առաջարկութիւնն ալ լսեցինք: Օտ-
եան էֆ. կը սխալի խնդրոյն հիմը դնելուն մէջ.
Օտեան եւ Պէկեան էֆէնտիները սխալեցան
Քաղ. ժողովը գործադիր իշխանութիւն է ը-
սելով: Այ, գործադիր չէ Քաղ. ժողովը. ճիշդ
այնպէս գործադիր չէ ինչպէս որ չէ Կրօն.
ժողովը, Քաղ. ժողովն երբ ժողով է, գործա-
դիր չկրնար ըլլալ. երբ թիւը մէկէն անդին
անցնի, ժողով է. գործադիր պաշտօնեայք
մէկմէկ մարդ են. թէ որ Եւրոպան օրինակ
պիտի բերեն, հոն ալ գործադիր ժողով չկայ.
պաշտօնէութիւնն ուրիշ է, գաղղիներէն գիտ-
ցողը թո՛ղ անունը տայ այդ ժողովին:

ԵՌԻՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ.— Pouvoir executif

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ.— Եւրոպայի մէջ խոր-
հուրդներ կան, որ գործադիր իշխանութեան
մասն կը կազմեն:

ԽՓԷԿՃԵԱՆ Զ. ԷՖ.— Ձուիցցէրի մէջ կայ,
բայց մեր մէջ գործադրելի չէ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— (Շորաւնիւլ) Գոր-
ծադրութիւնը պատասխանատուութիւն կեն-
թագրէ, անհատները պատասխանատու կըլ-
լան, իսկ ժողովներն ո՛չ: Բայց եթէ Քաղ. ժո-
ղովը գործադիր չէ, հապա ինչ է. — Քաղ.
ժողովոյ պաշտօնը յարաբերութեան պաշտօն է
եւ կը նմանի Եւրոպայի կամ Ամերիկայի ծերա-
կուտին: Եւ նոյն իսկ ասոր համար է որ կը
վախցուի մէկ մարդու մը յանձնել: Օտեան
էֆ. այս մասին Սահմանադրութեան մէջէն մի
քանի պարբերութիւն մէջ բերելով, խարէա-
կան անուանեց դանձք. կընդունիմ թէ Սահ-
մանադրութեան մէջ հակասութիւններ կան,
բայց խարէութիւն ո՛չ: Ահաւասիկ այս հակա-
սութիւնը հաստատող յօդուածներ. (էջ Շորոյ
քննիչ):

Քաղ. ժողովոյ պաշտօնն եթէ տեսութիւն
է, գործադիր չէ, եւ կթէ գործադիր է, տես-
չութիւն չէ. նոյն իսկ խմբագրողներուն մըա-
քէն անգամ չէ անցեր. պատճառն ուրիշ բան
չէ, եթէ ոչ հին լաթին նոր կարկան մ'ըրեր

են, ինչպէս երբեմն Աղաթօն էֆ. ըսած էր
Ընդհ. ժողովոյ մէջ. Ուրիշ տեսակեալ մը կայ,
այն է յեղափոխութիւն չպիտի մնար, եթէ
Քաղ. ժողովոյ անդամները Պատրիարքին պաշ-
տօնեաներն լինէին: Յեղափոխութեամբ կազ-
մեալ այդ ժողովներու գոյութիւնը կապացու-
ցանէ որ ամենեւին իրրեւ պաշտօնեայ չեն
նստիր Քաղ. ժողովոյ արժանեւորն վրայ, այլ
տեսուչ եւ հսկող են Պատրիարքին վրայ Ընդհ.
ժողովոյ կողմէն. իրենք Պատրիարքին եւ չէ
թէ Պատրիարքն իրենց վրայ հսկողութիւն ու-
նի, Պատրիարքը պարտաւոր է գործերն իրենց
ներկայացնել. իսկ Պատրիարքին պաշտօնեա-
ներն են, ինչպէս ըսի ուրիշ անգամ, փոխա-
նորդը, Հիւանդանոցի տեսուչը, դատաստա-
նապետը, ելմտական պաշտօնեայն, եւն: Բայց
ենթադրելով պահ մը թէ Քաղ. ժողովը գոր-
ծադիր պաշտօնէութիւն է եւ Պատրիարքէն
պիտի ընտրուի, ուրեմն Կրօն. ժողովն ինչ է.
տեսէք ո՛ւր գացինք: Երթամք դաւաճներն,
ինչ որ է Պատրիարքն Պօլսոյ մէջ՝ նոյնն են Ա-
ռաջնորդները դաւաճաց մէջ. եթէ Առաջնոր-
դին տաս Քաղ. ժողովոյ ընտրութիւնը, խել
մը բոնաւորներ պիտի նստեցնէ, մինչեւ որ
յեղափոխութիւն ելնելով Առաջնորդը ինչայ
իւր պաշտօնէն:

Օտեան էֆ. ի փաստերէն մէկն ալ այն էր
թէ՛ երբ Ընդհանուրէն ընտրուին Քաղ. ժողո-
վոյ անդամք եւ Պատրիարքի վստահութիւնը
գրաւող չլինին, Պատրիարքը սխալ դիրքի մը
մէջ պիտի գտնուի: Բայց պէտք է խոստովա-
նիլ որ Քաղաքական ժողովականք Ընդհ. ժո-
ղովոյ վստահութիւնը գրաւող պէտք է լինին,
ինչպէս Պատրիարքը. . .

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ.— (Ընդհ. քննիչ) Այդ ճշմարիտ
է, ես ալ ձեր ըսածին պէս ըսի եւ ոչ այլ
ինչ:

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ.— (Շորաւնիւլ) Պէկե-
ան էֆ. ըսաւ թէ պաշտօնէութիւնը մեր
Ազգին չյարմարիր եւ յիստակար է, ո՛չ, ես
այդ կարծիքէն չեմ, պաշտօնէութիւնը կընդու-
նիմ, միայն յարաբերութեանց մասին յիստա-
կար կը դատեմ եւ ոչ միւս մասերուն: Ըսաւ
թէ՛ մեք հպատակ ազգ եմք, անոր համար
չեմք կրնար ընդունիլ, այս ալ սխալ է, ու-
րովհետեւ ինքնօրինութիւն ունիմք եւ այս մա-
սին տարբերութիւն չունիմք ուրիշ քրիստոն-
եայ հպատակ ժողովուրդներէն, որոց ինքնօ-
րինութիւնը չկրնար առնուիլ. Պէկեան էֆ. ը-

ուսանալով թէ՛ մեր Երեսփոխանական ժողովուրդին անուանական է. այդ ալ չեմք կրնար ընդունիլ. թէ որ Բաղ. ժողովը Բ. Դանէն վաւերանալու առաւելութիւնն ունի. Բնդ. ժողովն անոր հակառակ չվաւերանալու առաւելութիւնն ունի. որովհետեւ Բնդ. անուր ժողովն ուրիշ իշխանութենէ հաստատուելու պէտք չունի եւ ինքզինք կը վաւերացնէ. Բայց թէ ինչո՞ւ համար երբեմն անուանական է եղեր. ամեն ժողով կրնայ ինքզինք մեղցնել եւ անուանական ընել. ինչպէս որ պետական հարուածին ժամանակ Բնդ. ժողովն ինքզինք անուանական ըրաւ. բայց հիմա ալ անուանական է չեմք կրնար ըսել. Դարձեալ Պէկեան էֆ. ըսաւ թէ՛ պատժոյ օրէնք չունիմք. այս ալ սխալ է. ո՞վ արգիլեց զմեզ պատժական օրէնք դնելէ. զի՞ր որ ունենաս, թո՞ղ ինի բարոյական, դարձեալ պատիժ է. Բայց ես գառնալով ժողովոյ այն որոշման, որով վիճարանութեան գոցուած ըլլալը հրատարակած էր, կը յիշեցնեմ որ Սահան էֆ. ի խօսք արուելով այսօր վիճարանութիւնը նորէն բացուեցաւ. եթէ վիճարանութիւնը պիտի շարունակուի, ուրեմն աւելորդ էր առաջարկութիւն ընող երեսփոխաններն ի մասնաժողով հրաւիրել, որք իրենց համոզմանց մէջ զո՞րոշութիւններ ըրին եւ համաձայնութեամբ տեղեկագիր մը բերին. եթէ կրեսմ՝ վիճարանութիւնը պիտի շարունակուի, մեք ալ մեր զո՞րոշութիւնը ետ կառնու՞մք եւ կը պնդեմք մեր առաջին համոզման վրայ. ապա թէ ոչ պէտք է Մասնաժողովոյ առաջարկութիւնը քուէի դրուի լմննայ. Ահա այս է իմ վերջին առաջարկութիւնս.

Բնդ. — Երեսփոխան. — Քուէ՛, քուէ՛, Քուէ՛ի դրէ՛ք.

ԱՍՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ժողովը պահ մը դադար առնելէ ետեւ վերստին ատենանը բացուելու միջոցին Կիւանը յայտարարեց թէ՛ Մասնաժողովոյ կողմէ առաջարկութիւնք եկած են եւ անոնց վրայ է վիճարանութիւնը, եւ թէ խօսք ուղղունքն որ կարգաւ արձանագրուած են պիտի խօսին եւ այնուհետեւ քուէի պիտի դրուի. հիմա որ քուէ կըսէք, ի՞նչ է քուէի դրուելիքը.

Չ. — Մասնաժողովոյ առաջարկութիւնները.

Ատենապետ էֆ. խօսից կարգին մէջ նշա-

նակեալ երեսփոխանաց կարգաւ կը հարցնէ թէ կուզե՞ն խօսիլ. ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Օգտէն էֆ. ի վերջին առաջարկութիւնն ետեւ հարկ չեմ տեսներ խօսելու.

Տ. ԱՄԲԲՈՍԻՈՍ ՎՐԻ. — Եթէ քուէի առաջարկութիւնը պիտի ընդունուի, խօսելու իրաւունքս կը դռնեմ.

ՊԱՌԵԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Նոյնպէս.

ՕՍԿԱՆԵԱՆ Խ. ԷՖ. — Նմանապէս.

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Ի պատասխան Պէկեան եւ Օգտէն էֆէնայինքը, որ իմ խօսքերուս մէջ հակասութիւններ գիտեցին, կը խնդրեմ միայն Ատենապետի էֆ. էն որ հաճի մասնաւոր խոջ նամ տանիլ իմ խօսքերուս անթերի արձանագրութեան.

ԻՓԷԿՆԵԱՆ Զ. ԷՖ. — Կը տեսնեմ որ Բաղ. ժողովոյ գործադիր իշխանութիւն ըլլալուն կամ չըլլալուն վրայ դեռ տարակոյս կայ, մինչդեռ լուծուած է այս խնդիրն. Առաջարկութեանց Մասնաժողովոյն տեղեկագիրն ստորագրողներէն մին ալ ես եմ. Մասնաժողովոյն առաջարկութիւնն ընդունեցայ այն պայմանաւ որ Տեսուչ Խորհուրդք ուղղակի Բաղ. ժողովէն չընտրուին. երբ մէկ կողմէ Մասնաժողովուրդ լաւ քննելու ըլլածք, կը տեսնեմք որ Բաղ. ժողովը գործադիր իշխանութիւն է միմիայն յարաբերութեանց նկատմամբ. իսկ միւս կողմէ երբ կեանքի պահանջումները գիտելու ըլլածք, կը տեսնեմք որ իրօք գործադիր իշխանութիւն է Բաղ. ժողովը. Նոյն իսկ Մասնաժողովութեան մէջ հակասութիւնք կան այս մասին. Պատրիարքի իշխանութիւնը Բաղ. ժողովականք կապտել ուզած են. ինչով որ Պատրիարքի իշխանութիւնը կապտել ուզած են, նոյնով որու անվստահութիւն կըսեն Խորհուրդներն ալ Բաղ. ժողովինը կապտած են. Աեանքի պահանջումներուն մէջ ալ հակասութիւններ կան. անաւտիկ սա՛ յօդուածը (էջ 1-7-ը) յայտնի ապացոյց մ'է անվստահութեան, որով Բաղ. ժողովը կը կապտէ Պատրիարքին իշխանութիւնն եւ Խորհուրդները կը կապտեն Բաղ. ժողովոյ իշխանութիւնը. Երեսփ. ժողովը կուզէ բարձր պաշտօնի մէջ ճանչել զԲաղ. ժողովն, մինչդեռ նա շատ պըղտիկ է իւր պաշտօնին մէջ. միմիայն յարաբերութեանց նկատմամբ գործադիր ըսելու եմք. բայց վերջնեմք որ չփոթութիւնք վերնան ըմբռնեմք իբրեւ կարգադրիչ Ազգին եւ Բ. Կը-

րան մէջ եղած յարաբերութեանց. եթէ Բաղ. ժողովն համարառու է ըսեմք գործադիր իշխանութիւն չմնար. այս համոզմամբ էր որ թէ՛ թեմամբ ստորագրեցի տեղեկագիրն. երբ Խորհուրդները Բաղ. ժողովէն չընտրուին՝ կընդունիմ, ըսի, Բաղ. ժողովոյ Բնդ. անուրէն ընտրութիւնը Չեմ ընդունիր. թէ Պատրիարքը պատասխանատու չէ, այլ Բաղ. ժողովը. կեանքն ասոր հակառակը կապտեցունէ, կեանքի պահանջումք եւ Մասնաժողովութեան արամադրութիւնք հակառակ են իրերաց, Մասնաժողովութիւնն՝ այն ժողովն որով կը կապտէ զՊատրիարք, ստորին Խորհուրդներով կը կապտէ. մե՞ծ հակասութիւն մը. աղէկ որ լաւ հասկցուած չէ ցարդ, եթէ ոչ շատ ծանր հետեւանք կը ծագէին. Մասնաժողովոյ մէջ ընկերներուս խօսք սուած էի առաջարկութեանը պայմաններուն վրայ չվիճարանիլ, եւ չը պիտի համարիմ վիճարանութիւն, թէ եւ իմ առաջարկութիւնս տարբեր է. Բաղ. ժողովն այն ատեն համարատու կը ճանչեմ, երբ իրօք համարառու չէ. Ոմանք ըսին թէ ուրիշ աղագաց օրինակին չհետեւիմք, այդ աղէկ. բայց երբ ելնեմք Անդղիայէն Մասնաժողովութիւն մ'առնեմք եւ ըսեմք թէ մեզ Հայոցս համար զատ թուարանութիւն, չիսի, ֆիզիք պէտք է, ասի ծաղրելի է. ստրկական հետեւողութենէ զգուշանամք, բայց զիտնամք նաեւ թէ պատմութիւնն ամենուն համար է, եւ մեր փորձերով մեք խրատուիմք. Ես ալ կը փափաքիմ որ խնդիրը չուտով վերջանայ, ուստի վերջին խօսք մ'ընեմ, Բաղ. ժողովն իր վիճակէն առնելով գործադիր իշխանութիւն է կըսէի, եւ անոր համար ընտրութիւնը Ս. Պատրիարքին յանձնել հարկ էր. հիմա գործադիր իշխանութիւն է չպիտի ըսեմ, եթէ ուրիշ գործադիր ցուցնեն, որ անշուշտ Խորհուրդներն են պիտի ըսեն. Ուստի այս անգամու համար պիտի պնդեմ որ Բաղ. ժողովոյ ընտրութիւնն Բնդ. անուրէն լինի, վասն զի եթէ Պատրիարքն ընտրէ, ամեն ձախող դէպք այս պարագային պիտի վերագրեն. Այս առթիւ վերըստին կը կրկնեմ այն առջին առաջարկութիւնս թէ՛ պէտք է Բնդ. ժողովս այն կարեւոր խնդիրը ձեռք առնու, որու համար վերակազմուեցաւ, Մասնաժողովութեան վերաքննութիւնը կըսեմ, որպէս զի ձախող փաստարանութիւնները դադարին. ամեն անգամ այս տեսակ մասնաւոր խնդիրներ ընդհանուր վիճարանութեան

կերպարանք առին. բայց թէ ի՞նչ կերպիւ պէտք է յաջողցնել Մասնաժողովութեան վերաքննութիւնն, այն ալ յետոյ իւր կարգին պիտի խօսիմ.

ԱՍՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարծեմ բաւական պարզուեցաւ խնդիրն. Ալ հիմա կրնամք քուէի դնել.

ՕՏԵԱՆ Գ. ԷՖ. — Միայն իմ խօսքս չէ հասկըցուած, երկու խօսքով նորէն հասկցնեմ. Իմ առաջարկութեանս նպատակը Ս. Պատրիարքին յանձնել չէր Բաղ. ժողովոյ ընտրութիւնն, այլ Բնդ. ժողովով ընտրել Պատրիարքին եւ հետզհետէ ցուցուած մասնապետաց գործակցութեամբ, որպէս զի թէ՛ Բնդ. ժողովոյ եւ թէ՛ Ս. Պատրիարքին վստահութեանն արժանաւոր անձինք ընտրուին. Իսկ երբ ասոր հակառակ Պատրիարքին վստահութիւնը ժողովոյն վստահութեան չհանդիպի, Պատրիարքին անձն անտանելի կը լինի. Ահա՛ այս էր իմ հասկըցնելու զաւանդ.

Տ. ԽՈՐԷՆ ԵՊՍ. — Ես չպիտի պատասխանեմ այն ակնարկութեան որ ինձ դէմ ուղղուեցաւ ատենաբանի մը կողմէն. ինչպէս որ ուրիշ անգամ ալ ըսած եմ, իմ սկզբանցս հակառակ է անձնականութեանց դաշիլ եւ անձնական ակնարկութիւնք խառնել ժողովոյս մէջ. Գալով խնդրոյն, այն տեղեկագիրը որով Մասնաժողովն իւր առաջարկութիւնները ներկայացուցած է, պէտք էր որ իմ ստորագրութիւնս ալ կրէր, ըսա որում ես ալ նոյն Մասնաժողովոյ անդամներէն մին էի, սակայն ստիպողական դէպք մ'արգելք եղաւ ինձ Մասնաժողովոյ վերջին նստերուն ներկայ գտնուելու, այսու ամենայնիւ ըսել չէ այս թէ ես Մասնաժողովոյն անհամաձայն գտնուեցայ. Նախորդ նստին ես ալ առաջարկութիւն մը բերած էի ժողովոյս եւ ազգօգուտ համարելով ջանացած էի զայն պաշտպանել. երբ ինկատի առինք մասնաւոր գաւառացուց վիճակը, տնաս երեւցաւ մեզ նախնի սովորութեանց անհամաձայն նոր բան մ'առաջարկել այնպիսի ժամանակ մը յորում տակաւին կիրքերը յուզեալ են, ուստի իմ անձնական համոզումս՝ զոր նախ ունեցեր էի վերաքննեալ ծրագրին տակ ստորագրելով եւ վերջը հոս բերելով զո՞նեցի հասարակաց օգտին համար. Եւ մասնաւոր, Տեսարք իմ, զարմանալի՞ չէ որ այնպիսի ատեն մը կուզեմք Բաղ. ժողովոյ ընտրութեան եղանակը փոխել երբ Վարչութեան մէկ մասն արդէն կազմուած

է. քանի որ կրօն . ժողովն ըստ նախկին սովորութեան ընդհանուր է . ժողովին ընտրութեամբ . Քաղաքականն ալ ընդհանուրէն պէտք է ընտրութիւնը ըստ նախկին սովորութեան ընդհանուր . ժողովույն վերապահեմք ընտրել իւր ուզած անձինքը եւ ներկայացնել Ս . Պատրիարքին . չըսեմք թէ ընդհանուր . ժողովը Պատրիարքին վստահութեան արժանաւոր անձինք չկրնար ընտրել . քանզի նոյն ընդհանուր իւր վստահութեան արժանի Պատրիարք մը կրնարէ, կարող է նաեւ այնպիսի արժանաւոր օգնականներ ընտրել որ վստահելի լինին Ս . Պատրիարքին :

Այսպէս ընտրութեան իրաւունքն ընդհանուր . ժողովույն վերապահելէ ետեւ կը մնայ թուոյ խընդիրը . այս խնդրոյն մէջ կենսական պատճառ չկայ եւ չկրնար լինիլ . Մասնաժողովը 20 էն 14 ի իջնելու առաջարկութիւն ըրած է կրօն . ժողովոյ թուոյն հաւասարացնելու համար . վասն զի կրօն . եւ Քաղ . ժողովներն երբեմն կը միանան Եսաճ . ժողով կազմելով . եւ իրենց մէջ անհամաձայնութիւն մը եթէ պատահի , ո՞վ պիտի լուծէ զայն , հարկաւ քուէն . եթէ Քաղ . ժողովը թուով աւելի լինի , առաւելութիւն մը պիտի ունենայ եւ պիտի իշխէ կրօնականին . ուստի թուոյ հաւասարութիւնը պատշաճագոյն եւ կարեւոր կը դառնայ . Եսաճ ընտրելուց ցուցակի պէտք չեմ տեսներ , այդ հարկն սկզբունք չունի . ընդհանուր . ժողովն այնպիսի անձանցմէ կազմուի է , որք զիսն զով պիտի ընտրեն , եւ իրենց խելահասութեան վրայ կասկած մը չունինք . ուստի պէտք է թողուլ նոցա բացարձակ կամացն , որպէս զի ընտրեն իրենց արժանաւոր դատած անձինքը . Վարչութեան Քաղ . ժողովոյ համար :

Աւրեմն , Տեաքք իմ , քանի որ իմ կարծիքս զոչնցի միութեան համար , կը խնդրեմ դուք եւս զոչնցէք ձեր կարծիքներն որպէս զի համաձայնութեամբ վերջանայ խնդիրը . Մինչեւ որ զոչնցէք ընդհանուր չըլլայ , Ազգին կենաց մէջ միութիւն եւ յարաստեութիւն չկրնար լինիլ . մանաւանդ մեզ համար , որ ցրուեալ ազգ մ'եմք երբ կամքերը ցրուին , ծայրն անիշխանութիւն է . Մեք օրինակ եմք դաւառացոց , եթէ դամ մի մեր այս ժողովոյն վրայ դարձնեն աչքերնին եւ տեսնեն թէ Քաղ . ժողովոյն ընտրութեան համար այսչափ նիստ ընելէ ետեւ չեմք կրցնել ընտրել , եւ եթէ անոնց մէջ ալ ճարակի այս ախտ , մտածեցէք թէ մեր Ազգին ցարակի

վիճակն ուր կերթայ կը յանդի . Արդ համաձայնիմք եւ վերջ ասոք զոչնցով այլ եւ այլ անձնական կարծիք յօգուտ հասարակաց , որոշեմք Քաղաքականին ընտրութիւնն ընդհանուր . ժողովին 14 թուով , որ ինչպէս կերելի ժողովոյն մեծագոյն մասին կամաց համաձայն է , եւ զոչնց երնելով աւելեմք Ազգին՝ որ ազնու կրտստսէ , թէ վերջացաւ այս մեծ խնդիրն եւ Ս . Պատրիարքն ունեցաւ իւր Քաղ . ժողովը :

ՕՍԿԱՆԵԱՆ Խ . ԷՑ . — (Թուոյն զ Եսաճ . ժողովը իջնելու) Արդոյ Ատենապետ , մէջը վերջացնելու համար առաջարկութիւն մ'ունիմ , որ կը համաձայնեցնէ ժողովոյ կարծիքները :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . — Կը տեսնեմ որ ամենքն համարեալ են Քաղ . ժողովոյն ընտրութիւնն ընդհանուրէն ըլլալու մասին . նոյն իսկ Օտեան էՖ . ալ համաձայնած է ծրագրին համեմատ ընդհանուր . ժողովոյ մէջ կատարուին առաջարկելով :

ՕՏԵԱՆ Գ . ԷՑ . — Իմ առաջարկութիւնս այն է , ինչ որ ծրագրին մէջ գրուած է :

ՊԵՆԵԱՆ Թ . ԷՑ . — Մեր առաջարկութեան եւ ծրագրին մէջ անհարկ տարբերութիւն կայ :

Ձայնէր . — Քուէ , քուէ կուղեմք :

ԱՏԵՆԱՊԵՏ . — Աւրեմն կուղեք որ Քաղ . ժողովոյն ընտրութիւնն ընդհանուր . ժողովով կատարելու առաջարկութիւնը քուէով որոշուի . . .

(Այս . յո .)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . — (Նուրի . իսկ թուոյն համար միայն մէկը 10 կատարակէ , միւսները 14 ի համար համաձայն են .

(Թուոյն զ Եսաճ . ժողովը իջնելու)

ՏՕՔԹ . ՌԱՅԱՅԷԼԵԱՆ ԷՑ . — Կատարակեմ որ թիւնն առաջ ընտրութեան եղանակը քուէի դրուի , նախ՝ առաջարկութեանց Մասնաժողովոյ առաջարկութիւնն , եւ յետոյ Օտեան էՖ . ի առաջարկութիւնն , իսկ ամենէն վերջը՝ թիւք քուէի դրուի :

ՕՏԵԱՆ Գ . ԷՑ . — Քուէնն առաջ խօսք ունիմ , կերելի թէ իմ առաջարկութիւնս դարձեալ սրբալու հասկցուերէ . առաջարկեցի որ Քաղ . ժողովոյն բոլոր անդամներն ալ ընդհանուրէն ընտրուին , սա թէութեամբ որ Ս . Պատրիարքին

զորակցութիւնն ալ հետք գանձուի . Այս կէտն որչափ որ կրցայ բացատրելի արդէն եւ պատճառները մէջ բերի . իմ կարծեօքս այս է . ամենէն բանաւոր եւ զործնական եղանակը . բայց ես իմ կարծեացս վրայ չեմ պնդեր , ետ ալ չեմ առնուր , զի կէս պատճառաբանութիւն մ'անդամ չըսեցի , որ կարենար իմ համոզումս զոնել տալ . թէ եւ յամառելու չափ յանձնապատասանութիւն չունիմ , բայց պէտք է որ իմ առաջարկութիւնս ալ քուէի դրուի , եթէ չընդունուի եւ տարբեր կերպիւ որոշուի , կը փափաքիմ որ այն որոշումը աւելի աղէկ տնօրինուին Ազգին զործերը :

Գալով Խորէն Սրբազանին , որ անձնական ազնուութեան խօսք մ'ըրաւ , չգիտեմ թէ ի՞նչ համար էր . բայց ես կը յիշեմ որ իմ խօսքերուս մէջ իրեն ուղղեալ բան մը չկար , քան . զի զիտաւորութեանս մէջ ալ չկար :

Տ . ԽՈՐԷՆ ԵՊՍ . — Գոն եմ Օտեան էՖ . ի տրւած բացատրութեանէն :

Խնդիրը քուէի զնելու համար թեթեւ շշուկ մը կրննթանայ ՚ի ժողովն :

Ատենապետ էՖ . շշուկն հանդարտեցնելով քուէի կը զնէ այսպէս .

« Քաղ . ժողովոյն ընտրութիւնը բաց ցանկով ընդհանուր . ժողովոյ մէջ կատարուի » :

ՕՍԿԱՆԵԱՆ Խ . ԷՑ . — (Ընդհանուր) Կը բողոքեմ Գիւանին դէմ , որ Մասնաժողովեան համեմատ չընթանար այս քուէարկութեան մէջ . յօդուած առ յօդուած քուէի դրուելու է նախ 36 րդ յօդուածը եւ յետոյ հետեւեալ յօդուածը , առաջինը չորոշուած երկրորդը քուէի չկրնար դրուիլ .

Քուէարկութիւնն ընդհատելուն վրայ բողոքոյ ձայներ կելնեն եւ շիփութիւն կը տիրէ ժողովոյն մէջ :

Քանի ֆ . Նուրի . իսկ թուոյն համար միայն մէկը 10 կատարակէ , միւսները 14 ի համար համաձայն են .

ՊԵՆԵԱՆ Թ . ԷՑ . — (Այս . յո .) Երկու անգամ է քուէարկութեան միջոցին թոյլ կը վարուիք :

Տ . ԱՄԲԱՐՍԻՆՍ ՎՐԴ . — Թօսելու իրաւունքս զոչնցի քուէի դրուելու համար :

ՏՕՔԹ . ՌԱՅԱՅԷԼԵԱՆ ԷՑ . — Քուէարկելի խնդիրն ՚ի զիր առնուլ պէտք է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . — Կը կարգայ քուէարկութեան ձեւը եւ նորէն քուէի կը զնէ վերոգրեալ կերպով :

Ժողովն առանց ընդդիմադիր քուէի ընդհանուր հաւանութեամբ կընդունի , ՚ի բաց առեալ Օսկանեան էՖ . որ իւր բողոքը կը շարունակէր եւ նախ 36րդ յօդուածոյն քուէարկութիւնը կը պահանջէր :

ԻՓԷԿՃԵԱՆ Է . ԷՑ . — Չեմք չվերցնող երեսփոխանաց մէջ կարելի է գանձուին այնպիսիք ալ , որ ոչ այս եւ ոչ այն կարծիքէն լինին . ուստի Գիւանը պարտաւոր է հարցնել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ . — (Այս . յո .) Չեմք այդ զիտաւորութեան կը հետեւի որ գաղանխ քուէարկութիւնն պէտք էր ընել , բայց ալ ժամանակն անցած է :

Օսկանեան ի . էՖ . իւր առաջարկութեան ընթերցումը կը պնդէ եւ Գիւանը կընթեանու զայն , որ անաւտօրիկ :


« Որոշուի թէ Մասնաժողովեան 36րդ յօդուածոյն փոփոխութիւնն այսպէս ըլլայ . Քաղ . « Ժողովը կը բողոքուի զործերէն . Տեաքք » : « Ինչ . զի . զի . զի . 14 յօդուածներէ » :

Ժողովն այս առաջարկութեան ուշադրութիւն չընծայեր եւ Ատենապետ էՖ . կանցնի թիւք քուէի զնելու :

ՕՏԵԱՆ Գ . ԷՑ . — Կերեցէք , Ատենապետ էՖէնախ , Մասնաժողովոյ տեղեկագրին մէջ առաջարկութիւնն երկու յօդուածով ներկայացած էր նախ , նոյն յօդուածները մի առ մի քուէի զնելու էիք եւ յետոյ իմ առաջարկութիւնս . եթէ անոնք ընդունուին , իմ առաջարկութիւնս քուէի զնել հարկ չմնար , սա՛ զոչնցէք թիւք միայն կուտեսնամ որ իմ կարծիքս ալ առեւնապարկութեան մէջ արձանագրուած կը լինի ապագային համար :

Ատենապետ էՖ . Քաղ . ժողովոյն անդամոց թիւք 14 ըլլալու առաջարկութիւնը քուէի կը զնէ , եւ 3 հակառակ քուէի դէմ մեծագոյն մասով կընդունուի նոյն առաջարկութիւնը :

Յետոյ ընտրելուց ցանկի սրատարաստութեան համար Մասնաժողովոյն առաջարկած յանձնաժողովոյ կազմութիւնն ալ քուէի զնել կը փորձէ Ատենապետ էՖ . բայց քուէարկութիւնն որոշարդիւնք չունենար :



ԻԽՓԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Պահ մ'առաջ ընտրութիւնը բաց ցանկի վրայ կատարելը քուէի գրուեցաւ եւ ընդունուեցաւ. հիմա ալ ընտրելեաց ցանկին պատրաստութեան համար Յանձնաժողովոյ մը կազմութիւնը քուէի դնել կազուի. բայց ենթադրեմք թէ յանձնաժողովոյ մը կազմութիւնը չընդունուի, այն ատեն ինչպէս պիտի պատրաստուի ցանկն. Ուստի ուրիշ միջոց մ'ալ որոշելու եւ երկու միջոց ի միասին առաջարկելու է.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ լաւ. ուրեմն կը հարցնեմ թէ ուրիշ միջոց ալ առաջարկող կա՞յ.

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — Քաղ. ժողովոյ ընտրութիւնն ուղղապէս եւ ամբողջապէս ընդհ. ժողովն պիտի լինի. այսպէս կրկնեցի ես ալ, այսպէս ընդունեց եւ ժողովը. ասոր հակառակ առաջարկութիւններուն ամենն ալ մերժուած են, ինչու ուրեմն կը հարցնէք. Ատենապետ է՞ք. թէ ուրիշ առաջարկութիւն կա՞յ. Եթէ ցանկին պատրաստութիւնն Ատենապետ է՞ք. ինչ կամ Ս. Պատրիարքին յանձնել առաջարկուի, պիտի կրնա մք ընդունիլ.

ՏՕԲԹ. ՌԱՅԱՏԵԼԵԱՆ ԷՖ. — Ինչիրը լաւ մը չհասկցուած մենէ քուէ պահանջուեցաւ եւ մեք առանց հասկնալու ձեռքերնիս վերուցինք, որով քուէարկութիւնն անորոշ վիճակի մէջ մնաց. ուստի կառավարիւմ որ խնդիրը բացատրութեամբ նորէն քուէի գրուի. Մասնաժողովը կառավարիչ որ Քաղ. ժողովն ընդհանուրէն ընտրութի յանձնաժողովոյ մը ձեռք պատրաստուած բաց ցանկի մը վրայ, հետեւապէս կառավարիւմ սա կերպով քուէի դնել թէ ընդհ. ժողովն իր մէջէն ընտրուած յանձնաժողովոյ մը ձեռք պատրաստել ցանկի մը վրայ ընէ ընտրութիւնը թէ անկէ դուրս.

ԻԽՓԻԻՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ընտրելեաց ցանկը կրկնապատիկ թէ եռապատիկ պիտի ըլլայ. այս ալ պէտք է որոշուի.

ՏՕԲԹ. ՌԱՅԱՏԵԼԵԱՆ ԷՖ. — Քանի որ բաց ցանկ ըսուեցաւ, հազարապատիկ ալ լինի հոգ չէր.

Տ. ՂԵԻՈՆԴ ՎՐԴ. ՓԻՐՂԱԼԵՄԵԱՆ — կառավարիւմ որ եռապատիկ լինի ընտրելեաց ցանկը.

Ատենապետ է՞ք. քուէի կը դնէ եւ մեծագոյն մասով կորոշուի. եռապատիկ պատրաստել ընտրելեաց ցանկը.

Նոյնպէս քուէի կը դնէ ընտրելեաց ցանկի պատրաստութիւնն յատուկ յանձնաժողովոյ մը

յանձնել թէ Դիւանին. ժողովն ընդհանուր հանուածութեամբ կորոշէ յատուկ յանձնաժողովոյ մը յանձնել.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ա յժմ կարող յանձնաժողովոյ թուոյն է. կը հարցնեմ թէ քանի՞ անձէ պիտի ընտրուի յանձնաժողովը.

ՏՕԲԹ. ՌԱՓԱՅԵԼԵԱՆ ԷՖ. կառավարիչ հինգ հոգիէ կազմել յանձնաժողովը.

Իւթիւճեան Կ. ԷՖ. կը կրկնէ նոյն առաջարկութիւնը.

Քիւրքճիպաշեան Բ. ԷՖ. կառավարիչ առաջարկութեանց Մասնաժողովոյ յանձնել այդ պաշտօնը.

Խօճասարեան Օ. ԷՖ. կառավարիչ կրօն. ժողովոյ յանձնել.

Ղազարոսեան Ք. ԷՖ. կը կրկնէ Խօճասարեան է՞ք. ի առաջարկութիւնը.

ՏՕԲԹ. ՌԱՅԱՏԵԼԵԱՆ ԷՖ. — Քանի որ Օգոստէն է՞ք. եկեղեցականի պէտք կը տեսնէ, կառավարիւմ հինգ աշխարհական եւ երկու եկեղեցականէ կազմել յանձնաժողովը.

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴ. — կը բողոքեմ, ինչ է այդ խտրութիւնը. թո՛ղ խառն ըլլայ եկեղեցական եւ աշխարհական.

ՏՕԲԹ. ՌԱՅԱՏԵԼԵԱՆ ԷՖ. — Ուրեմն տասն անդամէ թո՛ղ կազմուի.

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴ. — Ո՛չ, հինգը բաւական է.

Տ. ՂԵԻՈՆԴ ՎՐԴ. ՓԻՐՂԱԼԵՄԵԱՆ — Հինգը քիչ է.

Տ. ՏՈՎ.Է. ԲԷՆ. ՄԿՐԵԱՆ — Երեք անձ ընդհ. ժողովոյ Դիւանէն, երեք կրօն. ժողովէն եւ երեք Տնտես. Խորհրդէն առնելով յանձնաժողովը կազմել կառավարիւմ.


ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՖ. — Տնտեսականի վերաբերեալ գործ չէ այդ. ես իբրեւ Տնտես. Խորհրդոյ անդամ համակարծիք չեմ այդ առաջարկութեան.

ՀՈՎՈՒԵԱՆ Ղ. ԷՖ. — Ես ալ իբրեւ Տնտես. Խորհրդոյ անդամ հրաժեշտ կուտամ սոց ընտրելութենէն.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն Դիւանը կընտրէ եօթն հոգի.

Ատենապետ կը վերնայ ժամ 10 1/2 ին.

ԱՏԵՆԱՊԵՏ Ս. ԱՂԱԲԷԿԵԱՆ Թ. Է. ՄԵՐԵԼԵՄ-ԳՈՒԼԷ



ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒՆԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի , և կը գտնուի
Եկեղեցեաց ըանկալները :